1889-ին Ճապոնը դառնում է սահմանադրական պետություն: Օրէնսդիր մարմին դառնում են երկու պալատները, իսկ գործադիր ոյժը՝ միկադօն է ու նրա ընտրած նախարարները: Սահմանադրությունը յայտարարում է անձնաւորության եւ բնակարանի անձեռնմխելիությունը, մամուլի եւ ժողովների ազատությունը, ի հարկէ օրէնքի սահմաններում: Դատաստանական իշխանությունը բաժանւում է գործադիրից, եւ դատաւորները դառնում են անփոփոխելի: Այսպիսով Ճապոնի կառավարությունը նպատակ է դնում արժանի տեղ գրաւելու քաղաքակրթւած պետությունների շարքում եւ շատ կարճ ժամանակի մէջ հասնում է իր նպատակին, ցոյց տալով մի զարմանալի տոկունություն, եռանդ ու կենսունակություն: Կեանքի ոչ մի կողմը նա բաց չէ թողնում իր աչքից, միշտ պատրաստ սկսելու նոր ձեռնարկություններ, չխնայելով ոչ մի նիւթական միջոց երկրի տնտեսական դրությունը բարձրացնելու համար:

Ճապոնական ռեֆօրմների ալիքները յեղաշրջեցին նոյնպէս եւ կրթութեան գործը, թէեւ, ճիշտն ասած, առաջ էլ Ճապոնը մեծ ուշադրություն էր դարձնում ժողովրդի կրթութեան վրա: Բոլոր դասակարգերը անխտիր ուսում էին ստանում, թէեւ ի հարկէ այդ ուսումը շատ տարրական էր ու գործնական բնաւորություն էր կրում:

Ճապոնի նախկին վարժապետը Չինաստանն է. ամբողջ տասը դար բուդդհիստ տաճարներն են եղել դրանց ուսումնարանները: 17-րդ դարից սկսւում է մի մասնաւոր սէր դէպի Կոնֆուցէի վարդապետությունը, մանաւանդ բարձր շրջաններում: Ճապոնական կրթությունը այն յատկանիշն ունի, որ աշակերտի խելքը զարգացնելիս՝ նրանք միշտ մեծ ուշադրություն են դարձնում եւ սրտի կրթութեան վրա: Այդ